Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա. Թունյան

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Վայոց ձորի մարզ Ջերմուկ համայնք գ. Գնդեվազ

«Գնդեվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

1-ին դասարան

Դասվար՝ Նաիրա Ներսիսյան

2022-2023 ուստարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1.Կազմել աշակերտների անվանացանկը և լրացնել էլեկտրոնային մատյանը /սեպտեմբեր/

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Բացատրել աշակերտների կարգապահական կանոնները

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

5. Կազմակերպել ծնողական խորհրդի նախագահի և անդամների ընտրություն

Ամենօրյա աշխատանք

1.Վարել էլեկտրոնային դասամատյանը

2. Հետևել կարգապահական կանոնների, պարտականությունների ճիշտ պահպանմանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

Ամենշաբաթյա աշխատանք

1.Ապահովել ծնող-դպրոց կապը

2.Վերահսկել էլեկտրոնային մատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից

3.Անցկացնել դասղեկական ժամեր

4.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական միջոցառումներին

2.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

3. Կազմակերպել ծնողական ժողովներ:

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն *(դասարանի ընդհանուր բնութագրը)* ***1-ին դասարանում սովորում են 13 աշակերտներ՝ 4 աղջիկ, 9 տղա: Աշակերտների մեծ մասը հաճախել է մանկապարտեզ, ունեն նախնական գիտելիքներ: Բոլոր աշակերտներն էլ ակտիվ են: Աշակերտներից մեկն ունի խոսքային խնդիրներ, որի հետ տարվում են անհատական աշխատանքներ: Մյուս աշակերտների ճանաչողական հմտությունները, ֆիզիկական զարգացվածության աստիճանը համապատասխանում են տարիքային նորմերին:***

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

- *Ծնողական ժողովների, ծնողխորհրդի հետ աշխատանքների կազմակերպում,*
- *Աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների կարևորում,*
- *Ձևական պարագաների կատարելագործում, նորերի ստեղծում,*
- *Անհատական և խմբային հանդիպումների կազմակերպում,*
- *Աշակերտների մեջ հայրենասիրության, պատասխանատվության, հոգևոր արժեքների սերմանում,*
- *Թեմատիկ, նպատակային, հայրենագիտական էքսկուրսիաների կազմակերպում,*
- *Ներդասարանական, ներդպրոցական, արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանքների միջև ներդաշնակ կապի ստեղծում,*
-

3. Հայեցի դաստիարակություն

3.1. Հոգևոր դաստիարակություն

- *Ազգային, մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը նպաստող միջոցառումների կազմակերպում:*
- *Աշակերտներին հաղորդակից դարձնել մանկական Աստվածաշնչին:*
- *Երեխաներին հեռու պահել աղանդավորական խմբերի ազդեցություններից:*
- *Ձևավորել անձ, որը կգիտակցի սեփական մշակույթի, կրոնի կարևորությունն ու նշանակությունը:*

3.2. Գեղագիտական դաստիարակություն

- *Ձևավորել, զարգացնել և աշակերտի գիտակցությանը հասցնել գեղագիտական արժեքները գնահատելու, գեղեցիկը, բարին, ճշմարիտը տարբերակելու կարողություններ և հմտություններ:*
- *Կազմակերպել էքսկուրսիաներ, դասեր բնության գրկում,*

- *Օգտագործել մայրենիի, կերպարվեստի, երաժշտության, տեխնոլոգիայի դասաժամերը այդ նպատակով:*

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

- *Ձևավորել հարգանք և սեր հայոց պատմության և մշակույթի հանդեպ:*
- *Ձևավորել քաղաքացիական ակտիվ դիրքորոշում և արժանապատվություն:*
- *Հաղորդել հիմանավոր գտելիքներ սեփական երկրի խորհրդանիշների մասին:*
- *Կազմակերպել թեմատիկ միջոցառումներ, տեսարժան վայրերի, թանգարանների այցելություններ:*

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

- *Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում:*
- *Վնասակար սովորույթների համդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:*
- *Ֆիզկուլտ-դաղարների հաճախակի կազմակերպում:*

3.5. Աշխատանքային դաստիարակություն

- *Հարգանք սերմանել ինչպես սեփական, այնպես էլ ուրիշի աշխատանքի նկատմամբ:*
- *Ներգրավել աշակերտներին դասարանական, համադպրոցական աշխատանքներին:*
- *Դասարանում կազմակերպել աշխատանքային բաժանում:*

3.6. Բնապահպանական դաստիարակություն

- *Բնության, նրա տված բարիքների հանդեպ ձևավորել հոգատար հանդուրժող վերաբերմունք:*
- *Ծաղիկների մշակում*
- *Թափոներից, բնական և արհեստական նյութերից իրերի պատրաստում:*
- *Էքսկուրսիաների կազմակերպում բնության գրկում:*

4. Դպրոց – ընտանիք կապը

Դպրոց – ընտանիք ամուր կապը դասվարի աշխատանքի ամենակարևոր մասն է: Կազմակերպել զրույցներ, քննարկումներ, համատեղ հանդիպումներ ծնողների, աշակերտների և ուսուց իչների միջև:

Ներգրավել ծնողներին արտադասարանական և դաստիարակչական աշխատանքներում:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ
1-ին կիսամյակ		
I	*Նախապատրաստվում ենք նոր ուսումնական տարվան: Անցկացնել զրույց՝ նվիրված գիտելիքի օրվան: Աշակերտներին ծանոթացնել դպրոցին, ուսումնական գործընթացին, ուսուցիչներին, դպրոցի կարգուկանոնին:*	*01.09-09.09*
II	*«Ես արդեն աշակերտ եմ» թեմայով զրույց անցկացնել: Ծնողական ժողով. ծանոթության հարցաթերթիկի լրացում, ծնողկոմիտեի կազմի ընտրություն:*	*12.09-16.09*
III	*«Իմ հայրենիքի պաշտպանները» թեմայով զրույց անցկացնել: «Ընկերություն, ո՞վ է լավ ընկերը»*	*19.09-23.09*
IV	*Զրույց «Իմ առաջին տպավորությունները դպրոցից» թեմայով Համագործակցություն*	*26.09-30.09*
V	*Զրույց «Իմ ուսուցչուհին» թեմայով Շրջակա միջավայրի մաքրություն*	*03.10-07.10*
VI	*Ծնողական ժողով. Կարգապահությունը և հերթապահությունը դասարանում*	*10.10-14.10*
VII	*Իմ դասընկերները, ինչպիսի դասընկեր եմ ես Ձևավորել հանդուրժող վերաբերմունք*	*31.10-04.11*
VIII	*Առողջ ապրելակերպ, անձնական հիգիենայի պահպանում, օրվա ռեժիմ Ինչ են սովորեցնում մեզ հեքիաթները*	*07.11-11.11*
IX	*Ես և իմ անունը Ո՞վ և ինչու՞ է ընտրել իմ անունը Պետական խորհրդանիշներ*	*14.11-18.11*
X	*Ծնողական ժողով. Զրույց «Եթե ես լինեի…» թեմայով*	*21.11-25.11*
XI	*Ինքնադիմանկար (ցուցահանդես) Զրույց «Ինչ է ազնվությունը» թեմայով*	*28.11-02.12*
XII	*Բնությունը և ես: Բնության ձայներ Մուլտֆիլմի դիտում և քննարկում*	*05.12-09.12*
XIII	*Զրույց « Ինչը կփոխեի իմ դասարանում, իմ դպրոցում» «Գնահատիր ինքդ քեզ»*	*12.12-16.12*
XIV	*Ծնողական ժողով. Նամակ Ձմեռ պապիկին Նախապատրաստվում ենք ամանորյա միջոցառմանը*	*19.12-23.12*
2-րդ կիսամյակ		
XV	*Զրույց « Ազգային հերոսներ» Ծնողական ժողով.*	*23.01-27.01*
XVI	*«Կարող եմ օգտակար լինել» «Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի»*	*30.01-03.02*
XVII	*Զրույց « Բնական աղետներ»: Տեսանյութի դիտում, քննարկում «Կարողանում եմ որոշում կայացնել»*	*06.02-10.02*
XVIII	*Զրույց «Տյառնընդառաջի խորհուրդը» Համագործակցություն. փոխզիջում*	*13.02-17.02*
XIX	*Ծնողական ժողով. Կոնֆլիկտների հաղթահարում. հաշտություն*	*20.02-24.02*
XX	*Իրավունքներ և պարտականություններ*	*27.02-03.03*
XXI	*«Մորս դիմանկարը»*	*06.03-10.03*
XXII	*Զրույց « Հայրենիքն սկսվում է իմ տնից»*	*13.03-17.03*
XXIII	*Զրույց « Առողջ սնունդ, ինչպիսին պետք է լինի մեր ուտելիքը» Վիտամինների կարևորությունը*	*03.04-07.04*

XXIV	*Ծնողական ժողով. Զրույց գազի վտանգավորության մասին*	*10.04-14.04*
XXV	*Զրույց « Ինչպես հյուր գնալ, ինչպես հյուր ընդունել» Ուտելու կուլտուրա*	*17.04-21.04*
XXVI	*Զրույց «Իմ երեգանքներն ու նպատակները»*	*24.04-28.04*
XXVII	*«Անվտանգ երթևեկության կանոնները» Հեքիաթների ընթերցում գրադարանում, քննարկում*	*01.05-05.05*
XXVIII	*Զրույց «Իմ ծննդյան օրը» թեմայով*	*08.05-12.05*
XXIX	*Ծնողական ժողով. Զրույց « Գրքի դերը» Զրույց « Ինչ գեղեցիկ է աշխարհը» թեմայով*	*15.05-19.05*
XXX	*Կիսամյակի աշխատանքների ամփոփում*	*22.05-26.05*